№ 11—ՓԱՍԱՆ ԵՒ ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՒՐԱԿԻ, 12 ՓԵՏՐՈՒԱՐԻ 1884

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Տարեկան գինն է 10 ռուբլի։
վեց ամսուանը՝ 5 ռ., երեք ամսուանը՝ 3 ռ., ամիսը 1 ռ.։
Առանձին համարներով իւրաքանչիւրը 5 կոպէկ։

Խմբագրատունը բաց է ամեն օր բացի կիւրակէ եւ տօն օրերից առաւօտեան 11—2 ժամը կէսօրից յետ։

Յատարարութիւնների համար վճարում են ամեն մի բառին 2 կոպ։ Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով։ Յայտարարութիւններ ընդունվում են Խմբագրատանը, «Կովկաս» հիւրանոցի տակ պ. Տէր-Յովսէփեանի ծխախոտի խանութում եւ պ. Շահվերդեանի պավիլիօնում։

Յօդուածներ ուղղած Թէ խմբագրութեանս եւ Թէ նամակները պէտք է պարզ ուղուած լինին գրոյի ստորագրութեամբ եւ հասցէով։ Խմբագրութիւնը կարող է փոփոխել, ուղղել եւ կրճատել յօդուածները։ Խմբագրութիւնը իւր վերայ չէ առնում յետ ուղարկել յօդուածները եւ պահում է երկու ամիս մինչեւ ցպահանջ։

Ատաղաձաղաջայիր պիտի են ուղղակի խմբագրութեան հետեւեալ հասցէով.— Въ редакцію газеты «Меру Айастани», въ Тифлисъ, или Redaction de «Meghou Haïastani», à Tiflis. (Caucase).

ՆԵՐԿԱՅ **1884** ԹՈՒԱԿԱՆԻՆ

„ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԼՐԱԳԻՐԸ

Ա՛յդ հրատարակի հոգի ուղղութեամբ եւ դիրքով

Տարեկան բաժանորդագինն է 10 ռուբլի կիսամեայ 5 ռուբլի.

Թիֆլիսում առորագրվել կարելի է 1) խմբագրատանը, 2) պ. Շահվերդեանի պավիլիօնում, 3) պ. Զ. Գրիգորեանի գրադարանում, 4) պ. Յ. Շահինեանցի ծխախոտի խանութում (Արծրունու գալէրէում) և 5) պ. Տէր-Յովսէփեանցի խանութում (Մէրզոյեվի տանը, գնացող հիւրանոցի տակը, իսկ օտար բաժանորդները Թող բարեհաճեն գիմել խմբագրատուն. — Въ Редакцію «МЕГУ АЙАСТАНИ»—Тифлисъ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.— I) Ազաջնորդողներ, II) Ներքին տեսութիւն, III) Քաղաքական IV) Բանասիրական, V) Թղթակցութիւնք, VI) Մանր լուրեր, VII) Խառն լուրեր, VIII) Ֆելիէտօն, VI) Յայտարարութիւնք, X) Պատասխանիք խմբագրութեան.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Ներքին Տեսութիւն. — Երկու խօսք կաթողիկոսական ընդրէի առիթ. — Թղթակցութիւն Կարսից։
Քաղաքական. — Քաղաքական լուրեր։
Մանր լուրեր։
Յայտարարութիւններ։
Բանասիրական. — Սիրոյ զոհ։

Թիֆլիս, 12 ՓԵՏՐՈՒԱՐԻ 1884 թ.

—

Մեր անցեալ կիրակվան յօդուածը կաթողիկոսական ընտրութեան մասին, Թէ այդ ընտրութիւնը նման չէ այլ քաղաքական ընտրութեանց և Թէ դրան ղեկավարողը Աստուծոյ մատն է, շատերին դայթակղեցրէ։ Շատերը զանէ են այն յօդուածը խիստ կրօնական և աստուածաբանական հայեացքով գրուած։ Այո՛, բայց այ՛ լապէս նայել էլ չէ կարելի այդ հարցի վերայ։ Ով կարդացել է երբ և իցէ մի կռնդակի «Անհասանելի կամքը Աստուծոյ կաթողիկոս ամենայն Հայոց» խօսքերը, նա կը հասկանայ, որ մեր գրածը շատ պարզ է և բոլոր նական։ Եկեղեցին աստուածապետական հաստատութիւն է, և սորա ղեկավարութիւնն Աստուծոյ անհասանելի կամքը։ Ուր հաւատալիք կան, որ անքննելի են, անհասանելի են մարդկային մտքին և որ հիմքն է եկեղեցւոյ վարդապետութեան, այնտեղ և ղեկավարը այդ անհասանելի կամքի տէրն է և ոչ հաւատացողն, որ միայն նորա ընտրհիւ գործիք է։ Եթէ մէկը ոչ և է եկեղեցու հաւատալիքը չէ ընդունում առանց երկմտութեան, և միայն Աստուծոյ ընտրհրին վստահ չէ նրանց հասկանալու համար, նա այն եկեղեցուն էլ պատկանում և ոչէլ իրան պիտի ներէ նորա գործերին խառնվելու,

վում այլ միայն հաշիւներով, նա որ ուրիշը տուն մնում է և հակառակ տան կանոնների կարգադրութիւն է անում նորա մէջ: Սա բարոյական անկման ամենաբարձր աստիճանն է:

«Новое Обозрѣніе» լրագրի կ. Պօլսի թղթակիցը ազգային ժողովի երկու կուսակցութիւն բաժանվելը Ս. Ներսէս Պատրիարքի կամ հրաժարվելու և կամ անպատճառ պատրիարքարան իջնելու ու ազգային ժողովականներին մանակցելու մասին, որ արդէն հայ լրագիրներից յայտնի է, վերջացնում է իւր գրութիւնը յայտնելով որ անցեալ 1883 Թ. սեպտեմբերի 20-ին Էջմիածնայ սինոդի ուղարկած թղթերը կաթողիկոսական ընտրութեան եղանակի մասին ուս դեսպանատան ձեռքով նոր ստացվել են պատրիարքարանում: Այս թղթերի ուշանալու առթիւ, որ անշուշտ պատճառներով կը լինէր, կ. Պօլսի պատրիարքարանն ու ազգային ժողովը, սինոդից շրջաբերական և հրահանգ չ'ստանալով իրանց կարգադրութիւնը կաթողիկոսական ընտրութեան ձևի մասին արդէն արել էն, ինչպես յայտնի է, ընդունելով 1866-ի ընտրութեան եղանակը, թէև դեռ ևս վերջնական դործ կատարված չէ ոչ ընտրելուց ցանկ կազմելու և ոչ էլ քուէարկութեան մասին: Բայց որքան յայտնի է, սինոդի կարգադրութիւնը բոլորովին համապատասխան չէ կ. Պօլսոյ ազգային ժողովի որոշման, որովհետև Սբբազան Սինոդը համաձայն հայոց եկեղեցոյ կանոնների և սովորութեանց պատրիարքարանի միջնորդութեամբ ուղղած է ցաճ կաստանի բոլոր վիճակներն առանձին առանձին հրաւիրութիւն, որ առաջնորդն ու վիճակի աշխարհական պատգամաւորը ներկայանան որոշել ժամանակը սուրբ Էջմիածին, ուր միայն կարող է կատարվել ընդհանրական ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրութիւնը, համաձայն կանոնաց Հայաստանեայց եկեղեցւոյ: Սրանից պարզ երևում է, որ սրբ. Սինոդը օրինաւոր չէ համարում 1866-ի ընտրութեան ձևը կ. Պօլսում, որ հակառակ է Հայաստանեայց եկեղեցւոյ սովորութեան: Այստեղ նոր դժուարութիւնք են ծագում, որոնք կարող են անախորժ հետևանքներ ունենալ, եթէ երկու կողմից էլ խոհեմութիւն գործ չի դնվի:

Մի կողմից Ս. Սինոդի, բարձրադոյն հոգևոր տեսնի և իշխանութեան (ներկայումս) կարգադրութիւն կայ, համաձայն եկեղեցական օրինաց, միւս կողմից պատրիարքարանի և կ. Պօլսոյ ազգային ժողովի (նոյնպես բարձրադոյն իշխանութիւն ստաձկահայոց վերաբերութեամբ) կարգադրութիւն, սինոդի շրջաբերականի ուշանալու պատճառով: Յայտնի բան է Սինոդի կարգադրութիւնն օրինաւոր էր, և դուցէ ոչ ազգային ժողովն և ոչ էլ պատրիարքարանը դժուարանային վարվելու համաձայն այդ կարգադրութեան, գանելով այն եկեղեցական կանոններին համաձայն, միայն այժմ գոյ ութեական կենդրոնական իշխանութեան հեղինակութիւնը դաւառների առաջ չը կասրելու համար, պէտ է դուարանան լծվին փոխելու իրանց կարգադրութիւնը: Այսպիսի դրութիւնից մի ելք դանելու համար երկու կողմերն էլ պէտք է զիջողութեամբ վարվին: Մենք կարծում ենք այս դրութիւնից ելքը կամ Ջմիւռնիոյ «Արևելեան Մամուլի» և կամ մեր առաջարկութիւնն է, ներկայումս ցանկալի էր, որ աւելի «Մամուլի» առաջարկութիւնն ընդունվէր իբրև աւելի յարմար, այն է կ. Պօլսոյ ազգային ժողովն առաջարկէր 7 ընտրելեաց ցանկ, յայտնելով որ այդ առաջարկածներից որն էլ ընտրվի, իրանց ընդունելի է և Ս. Աթոռում միայն դոյա վերայ քուէարկութիւն լինէր: Այսպէս կ. Պօլսոյ պատրիարքարանի կարգադրութիւնն էլ վիճակների վերաբերութեամբ իւր զօրութիւնը պահած կը լինէր, որով հետև իւրաքանչիւր վիճակ կը ներկայացներ իւր 7 ընտրելին և այդ վիճակային ցանկերից էլ ազգային ժողովը կազմելով իւրը՝ կ'ուղարկէր ս. Էջմիածին: Իսկ այստեղ ներկայ եղող թէ՛ եկեղեցական և թէ՛ աշխարհական պատգամաւորները, քանիսը միայն կարող կը լինէին կամ կը կամենային գալու թէ՛ վիճակներից և թէ՛ ազգային ժողովից, հաւասար իրաւունքով կը կատարէին Հայրապետի ընտրութիւնը, պահպանելով Ս. Աթոռում բոլոր նախնեաւանդ սովորութիւնքը: Յայտնի բան է այս ձևը ընտրութեան միայն բացառիկ դէպք է ներկայիս համար, իբրև հետևանք անակնկալ հանդամանքների և կատարված իրողութեանց: Իսկ ապագայի գործ է միանգամ ընդ միշտ մշակել կաթողիկոսական ընտրութեան եղանակն և արձանագրել դորա համար կարևոր կանոնները, ճանապարհ որոշելով վիճակներն:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԽՆԴՐԻ ԱՌԹԻՒ.

—

Ըստ եկեղեցական օրինաց և աւանդութեանց ամէն թեմ իրաւունք ունի մի-մի հոգևորական, և աշխարհական մարդ ուղարկել Էջմիածին ընտրութեան մանակցելու: Ուսաստանում պահպանվում են այդ աւանդութիւնները, բայց նորանը չէ կարելի ասել և Տաճկաստանի մասին:

Այնտեղ, ըստ երևոյթին, Պօլսոյ ժողովը մտադիր է սեպհականացնել այդ արտօնութիւնը, որն իսկապէս ազգին և դաւառներին է պատկանում: Մենք ոչինչ չենք ունենայ դորա դէմ, եթէ Պօլսոյ ժողովը իսկապէս «ազգային ներկայացչութիւն» լինէր: Նա այդ անունը կարող է կրել միայն այն ժամանակ, երբ ամէն թեմ ընտրէր իւր լաւագոյն տեղական մարդը և ուղարկէր նրան Պօլիս ազգային ժողովին մանակցելու: Բայց իսկապէս յայտնի է որ նորա ազգային անուանական ժողովը այդպէս չէ կազմակերպվում, այլ ամէն թեմ այդ ժողովի համար իրեն ներկայացուցիչ է ընտրում Պօլսոյ մէջ ապրող իւր հայրենակիցներից: Եթէ ազգային ժողովը լինէր Ջմիւռնիա կամ Էրզերում այն ժամանակ օր. վանեցին, կամ Մշեցին սոխրտած պէտք է լինէր այդ ազգային ժողովին համար անդամ ընտրել Էրզրումի, կամ Ջմիւռնիայի մէջ բնակուղ իւր հայրենակիցներից: Այս դիպուածն էլ ներկայացուցչութիւնն ի հարկէ կատարեալ չէր կարող համարուել, այլ մի քաղաք արտօնութիւններ է ստանում և բռնանում է ամբողջ ազգի ցանկութեանց վերայ: Ներկայումս այդպիսի բռնաբարող արտօնութիւններ վայելում է Պօլիսը: Ամէն մի կառավարութիւն ի հարկէ իրաւունք ունէ կարդադրել իւր երկրի ներքին կազմակերպութիւնը—Տաճկաստանն էլ նմանապէս — նա իւր ներքին խնդիրների վերաբերութեամբ կարող էր չատ առանձնաշնորհութիւններ տալ Պօլսին: Նա միշտ աւելի իրաւունք է տալիս կենտրօնին քան թէ մարդերին, մայրաքաղաքին քան թէ դաւառներին: Դա յարմար է տաճկաց կառավարութեան համար, բայց վնասակար է դաւառի և առ հասարակ ժողովրդի չահերին: Այդ եղանակ տաճկաց կենտրոնական կառավարութիւնն աւելի լաւ կարող է հպատակեցնել ժողովուրդը իւր կամքին: Դա չատ լաւ երևոյթ օրինակ պատրիարքական ձգնաժամի առթիւ, երբ սուլթանը Ներսէսին նորից պատրիարք նշանակեց (կարծես թէ Ներսէս մի փաչայ կամ Բարձր Դրան ծառայող լիներ) հնակառակ ազգային ժողովի ցանկութեան:

Մենք ի հարկէ իրաւունք չ'ունինք միջամտել տաճկաց ներքին քաղաքական գործերին, բայց պէտք է խոստովանինք, որ այդ դիպուածը չատ վայր ձգեց մեր աչքում թէ ազգային ժողովի և թէ նոյն իսկ Ներսէս Պատրիարքի վարիքը— պարզ ապացուցեց մեզ, որ նոյն իսկ Պօլսոյ հայերը ընութեամբ դեռ սորովներ են: Այս թողնենք. բայց մենք, այդու ամենայնիւ, չենք կարող հաւանել, որ այդ եղանակով կազմակերպված Պօլսոյ ազգային ժողովը, որն իսկապէս ժողովրդի ցանկութեանց ներկայացուցիչ չէ, մեր ընդհանուր ազգային— եկեղեցական խնդիրների վերաբերութեամբ ներկայացուցիչ հանդիսանայ: Ազգային ժողովը դուցէ այդ իւր թերութիւնները արդարացնէ նորանով, որ այդ եղանակով կազմակերպած ազգային ժողովը աւելի էժան կը նստի ազգի համար— չատ կարելի է, բայց մենք էլ դորան ի պատասխան կ'ասենք, որ մենք չենք ցանկանալ, որ մեզ համար մեծ կարևորութիւն ունեցող կաթողիկոսական խնդիրը այդպիսի էժան եղանակով կատարվէր, արժանը ըստ մեծի մասին վատ է լինում: Մայր Աթոռի և ազգի համար մեծ ծանրութիւն չէ 10—20 հազար ռուբլի աւելի ծախսել, որ բոլոր թեմերի ընտրված ներկայացուցիչները կարողանային դալ ս. Էջմիածին:

Մենանում կան չատերը, որոնք չեն ուզում ազգային ժողովի քէֆին դիպչել, որովհետև իրր թէ դորանով մենք վիրաւորած կը լինէնք Տաճկահայերին և և իրենց սահմանադրութեանը, բայց այստեղ մի մեծ սխալ կայ: Սահմանադրութիւն և ազգային ժողով դորա համանչան խօսքեր չեն: Ըստ սահմանադրութեան Տաճկաստանում պէտք է ներկայացուցչութիւնները կազմակերպված լինէին կանոնաւոր ազգային դաւառական ժողովներ, և այդ կազմակերպութեան մասին հազ սահմանն և աչխատանքն յանձնաժող էր ազգային ժողովին: Բայց իսկապէս յայտնի է որ նորա ազգային ժողովը մտածել անդամ չէ ուզում այդ մասին: Ո՞ւր է... կատարել է նա իւր պարտականութիւնը: Գանի թեմերում այժմ կարելի է կարգին ժողովներ գումարել, որպէս— ըստ սահմանադրութեան— կառավարչին իրենց ներքին գործերը: Ընդհակառակը ազգային ժողովը միչտ, կարծես, աչխատել է ճնշել գաւառների իրաւունքները, որ ինքը միակ կառավարիչը լինայ:

Ազգային ժողովը իւր հիմնած ժամանակից ցայսօր միչտ չկենդրոնական և պետական ուղղութեամբ է չարժուել՝ բռնաբարելով գաւառը և ժողովուրդը, նոյն իսկ 66 Թուականի ընտրութիւնն այդ հակաժողովրդական ուղղութեան մի դիպուածն է միայն: Այս րոպէիս մեր ամբողջ Թիֆլիսի մամուլը չը պիտինք լինէր Պօլսոյ ազգային ժողովի իրաւունքն է համարում տաճկահայոց կոչմանէ կաթողիկոսի ընտրող լինել— նա ընդունում է, որ դա մի չարիք է, բայց վերջ ի վերջոյ համաձայնվում է, որ ուրիչ ելք չը կայ: Ինչո՞ւ տալա չենք ուզում հարցնել տաճկահայոց գաւառական ազգային ժողովներից, մի տեսնենք նրանք էլ համաձայնվում են ընդունել 66 թուականի ընտրութեան ձևը: Չենք կարծում, որ համաձայնվելին: Ո՞վ իրեն վատ կ'ուզի, ո՞վ կամաւ իւր իրաւունքներից իրեն կը զրկի: Երբ կաթողիկոսի ընտրութեան ձևը քննվում էր Պօլսոյ ազգային ժողովում մենք գիտէինք արդէն թէ ինչպիսի պիսի նա ելք ունենայ: Միեմ բարոյականութիւն և ճըշմարտասիրութիւն էր պահանջվում ազգային ժողովից, որ նա համաձայնվէր «փիրասթը, (յաջող դէպքը) իւր ձեռքից գցել» և իրաւունքը տալ իրաւատէրերին, գաւառներին: Բայց ո՞րտեղից է այդ ճչմարտասիրութիւնը Պօլսում: Մենք գիտենք, որ մեր այս խօսքերը Պօլսոյց կարող է փոքր ինչ «խստապահանջ» երևիլ, բայց ինչ արած, որ ճչմարտութիւնը միչտ խստապահանջ է լինում:

Կաթողիկոսի ընտրութեան ս. սինոդի առաջարկած եղանակը ամենից արդարն և հեռատեսն էր և մենք միայն ցաւում ենք, որ նա բաւականին հաստատամտութեամբ չէ պաշտպանել իւր առաջարկած ընտրութեան եղանակը և այդպիսով մեղանչել է Հայաստանեայց եկեղեցւոյ աւանդութեանց և օրէնքներին դէմ:

Ի հարկէ ազգային ժողովը եւ Ներսէս Պատրիարքը պիտի ցանկանային, որ իրենք լինէին կաթողիկոսի իսկական ընտրողը— ս. սինոդը այդպիսի դիմադրութիւն Պօլսից պիտի սպասէր, բայց նա չը պիտի ընդունէր նրանց առաջարկութիւնը: Պօլիսն էլ ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի թեմ— աւելը իւր Պատրիարքով, էլ ինչու նա պէտք է այդպիսի առանձնաշնորհութիւններ վայելէ Հայոց եկեղեցուն ինչ, թէ նա ցաճկատանի մայրաքաղաք է: Եթէ այդպէս է. Պետերբուրգը և Մոսկվան, կամ Թիֆլիսը— կովկասի մայրաքաղաքը, իւր աւագին թեմով, կամ Ղարաբաղու թեմը իւր Գանձասարու մեսրոպեանութեամբ, կամ մայր Արարատեան թեմը պէտք է հարիւրաւոր ընտրողական ձայն ունենային, բայց դորանք էլ անկին ինչպէս Տաճկաստանի մի աննշանագոյն թեմը միայն երկու ձայն, սրանին ինչու Պօլիսը պէտք է 130 ընտրողական ձայն ունենայ էլ, արդարութիւնը ո՞րտեղ է!!!

Ընտրողները Թեմերն են, ընտրութեան տեղը— ս. Էջմիածինը:

Մեր ասելիքը մենք արդէն վերջացրել ենք, միայն մի երկու խօսք էլ ասիպատած ենք աւելացնելու, որ կասկածների տեղիք չը մնայ: Մեզ յայտնի է, որ չատերը կը ցանկանային ընտրութեան այս եղանակը, բայց վախում են, որ այդ եղանակով մի գուցէ Ա. ընտրվի և ոչ Բ.: Մենք ամենևին Ա. կասկից չենք և ոչ էլ Բ.-ից ընտրելին Գ. է. և մենք երբէք երևիլ տպատած չենք, որ Ա. կարող կը լինի ապստութիւն ունենալ ս. Էջմիածնում ասելով որ նա ընտրվել է ազգային ժողովի կողմից: Ո՞չ, ընտրվածը ընտրող — ժողովի վերայ և մեր ընտրելիից յայտնութիւնը խլելը: Մեր կարծիքով միայն Էջմիածնայ մէջ կատարուած ընտրութիւնն Հայաստանեայց եկեղեցու օրինաց և աւանդութեան համեմատ է: Ընտրութեան միայն այդ եղանակն է արդար և ընտրեալը— ով, որ դա լինի — ընդունելի:

Ց. Տ�էՐ-Մովսիսեանց,

Թիֆլիս, 6-ին փետրուարի. 84 թ..

ԿԱՐՍ

3 փետրվարի.

Դառն է խօստովանիլ, բայց բոլորովին ղուտ ճչմարտութիւն է, որ մեր գաւառական թղթակիցներից ոմանք, որք մերթ ընդ մերթ պարզում են այս և այն լրագրի անկիւնում, ոչ թէ նրա համար է, որ իրանց գրածներով լոյս տան մի մթին գործին, ծառային հասարակութեան բազմակողմանի չահերին, կամ ղարգացնեն մեր դրականութիւնը, այլ գլխաւորապէս այն անունէ փափագով է, որ իրենց անունն էլ փայլած տեսնեն դրականական հորիզոնում, և փառաւորվին, ըստ իրանց կարծեաց, իրանց չըքնաղատող մի քանի գունեղիկներից խլելով նոցա անարժան չրխմունքից իւր մաքուր գովեստներ: Այդ փոքրիկ պարտներ, որովհետև աչ և ահեակ նայելու կարողութիւնից զուրկ են, ուստի չատ անդամ անզգուշութեամբ իրանց ձեռքի աւելով ցեխը չպրտում են իրանց կողքով անցկենող չատ պատուաւոր մարդկանց երեսին, և իրանց մէջ էլ չեն զդում նրբէք, որ չատերի մաքրութիւնը պղծեցնին:

Այս տեսակ մարդկանց կարդին է նաև այն պարոն թղթակիցը, որ չորս է արած անցեալ տարվայ «Մշակի» լրագրի № 180-ում կարսի հայ ուսումնարանների վերաբերութեամբ մի թղթակցութիւն գրել, աւանց նոցա վերաբերութեամբ մի յուրի չափ անդամ տեղեկութիւն ունենալու, միմչև իսկ նոցա ճանապարհներն անդամ իմանալու, և իւր անզգուշութեամբ վիրաւորել է մի քանի օրինաւոր անձնաւորների սրբութիւնը և վնասել լուսաւորութեան յաջողընթացութեան, թէպէտ պարոնը ի վերջում զանազան միջոցներով ճիդն է թափում արդարացնել իւր անտեղի վարմունքը, չտալով մի քանի փայլուն բառեր, բայց և դրանցով էլ չի կարող իւր բնական պակասութիւնն ուղղել, նա վերջումն էլ մի և նոյն անզգուշութիւնն է գործում, ինչպէս յառաջ ևս մերթ խոփիկը կարող է իւր գոյնը փոխել: Բայց թողնենք սրանք, և պիտենք բուն խնդրին:

Ես ասացի, որ «Մշակի» պ. թղթակիցը կարսի ուսումնարանների վերաբերութեամբ մի նշանաւոյն չափ անդամ տեղեկութիւն չունի, ասա բացատրեմ. պ. թղթակիցը ընկել Աղբաքանդրօպօլցի է, և մի տարի է միայն, ինչ որ նա կարող է փոխադրուել առտարական գործով և ինչպէս նկատել եմք, նա իւր կեցութեան կես մասն էլ կարսից դուրս է անցկացրել. բացի դրանից, ոչով չի վկայել, որ նա երբէք կարսի ուսումնարանները այցելած լինի, ներկայ զըտնուած լինի կամ դասախօսութիւններին, կամ հարցաքննութիւններին և կամ հետաքրքրուած գոնէ դպրոցական ծրագիրներով և այլն: Հապա ինչպէս համարձակվել է նա գրել թէ՝ «կարսի ուսումնարանների երիք անձանց (երիք բժիշկներ) անձնուէր գործունէութիւնը, անյոգնելի և միանգամայն անվարձահատելի աչխատութիւնը, այո, անտրանալի է, բայց թէ ինչն է պատճառը, որ այդ

ժողովրդական ուրախությունը։ Ամբողջ ճանապարհին ժողովուրդը ոգևորությամբ ողջունում էր Ստալինյան սահմանադրության հեղինակին։

Ստալինը ընդունվեց ոգևորության ահռելի պոռթկումներով։ Ամբողջ դահլիճը ոտքի կանգնեց։ Ստալինի անունը հնչեց որպես ամենամեծ հայրենասիրության, ամենամեծ ազգային հպարտության խորհրդանիշ։

Ընկ. Ստալինը ներկայացրեց Ռուսաստանի Ֆեդերատիվ Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Սահմանադրության նախագիծը։

Ընկ. Ստալինի զեկուցումը ընդհատվեց ոգևորության ահռելի պոռթկումներով։

Ընկ. Ստալինը ասաց, որ Ռուսաստանի Ֆեդերատիվ Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Սահմանադրության նախագիծը ներկայացնում է ամբողջ ժողովրդի կողմից ընդունված Սահմանադրության նախագիծ։

Ընկ. Ստալինը ասաց, որ

որ եկեղեցւոյ երեսփոխանը չէ մացրել մատեանում, և այդ մանաւորւում է եկեղեցւոյ վերայ, ուսումնարանի հաշուին այսինքն պ. բժիշկների ձեռամբ եղածների հետ կապ չունի։

Իսկ երկրորդ հարցը նոյնպէս մինչև 79-ի հոգարարձութեան ժամանակն էլ պատահել, ուրեմն դարձեալ վերջնոյս գործերի հետ կապ չունի։ Իսկ այն վերաբերութեամբ թէ տեղւոյս եկեղեցական գործերի վարչութիւնը անհոգ է այդ հողի օրէնքով յետ բերելուն, նրան էլ պատասխանում ենք, որ ինչպէս ամեն վերայիչների մասին ոչինչ տեղեկութիւն չունին, պ. Թղթակից, նոյնպէս և սրանում բոլորովին անտեղեակ ես, եթէ մի քիչ ջնարհք ունենաս մտածելու գործողներին, այն ժամանակ կը խելամտես, որ կարսում քեզանից առաջ և քեզանից շատ ուրիշ մարդիկ էլ կան։

Պարոնը իւր երկրորդ գրուածում մի տեղումն էլ ուզելով ապացուցանել, որ եկեղեցւոյ և ուսումնարանաց գրամական հաշիւները խառն և անյայտ գրութեան մէջ են, այն մասնաւոր վերաբերութեամբ, ուր գրւում են և ուսումնարանաց ելքն ու մուտքը, ասում է, որ «երեսփոխանը տոմարի միջից պատառել է մի քանի թերթեր և չը կան նրա մէջ ուսումնարանաց վերաբերեալ մի քանի հաշիւները»։ Սրան էլ պատասխանում ենք։ Քանի որ դուք, պ. Թղթակից, նոյնպէս և ամբողջ կարսեցիք, խոստովանում էք, որ ուսումնարանաց վերաբերեալ ելք ու մուտքում, (ուր կատարվել են միշտ երեք բժիշկների ձեռամբ) բոլորովին «անարատ» են երեք բժիշկները, թէ կուզ ամբողջ տոմարն էլ կորչի, այդ ինչպէս կարող է արատ բերել ուսումնարանական հաշիւներին, այդ դէպքը միայն նրանով է վնասակար, որ ապառնին զրկվում է անցեալի պատմութիւնից։ Եթէ դուք սրա վերայ էք խօսում, իրաւացի էք, իսկ եթէ այլ կերպ, ուրեմն սուտ էք ասել, որ պ. Ղազազեանցը «անարատ է։ Այն ժամանակ ուսումնարանների հաշիւը «անյայտ» դրութեան մէջ կը լինէին, եթէ դուք ասէք, որ ուսումնարանների անուամբ եղած նուէրները յայտնի չեն, թէ որպէս են գործադրվում պ. բժիշկների ձեռամբ, արդեօք նրանք նպատակին հասնում են, թէ ոչ։

Ի վերջոյ պ. Թղթակից, այս առնից յետոյ, ես ձեզ հաւատացնում եմ, որ դուք ձեր խոհեմութեամբ միայն թղթակցութեան և լրագրութեան պատիւն էք արատաւորում և ձեր անխոհեմութեամբ ձեր յարուցած հարցերին միայն վնասում և օտարների գործէք վնասում։ Ուստի եթէ ձեր մէջ աղնուութեան հոգի կայ, եթէ ճշմարիտ, դուք հասարակութեան չահերին ծառայել էք ցանկանում, խորհուրդ կը տամ ձեզ զգուշութեամբ վարուել, հազարը չափել, ապա ապա մկը կորչել, կամ թէ ոչ, հեռանալ այդ ասպարիզից, որ ձեր գործը չէ։

Իսկ «Մշակի» պ. խմբագրից խնդրում ենք, հեռու մնալ այսպիսի թեթևընթաց թղթակիցներից, չէ որ դրանք գրականութեան պատիւ չեն բերում։

Իմ դրածներիս մասին համարձակ կերպով կը հաւաստիացնեմ յարգելի ընթերցողին, որ կէտ առ կէտ ճշմարիտ են, որովհետև բոլոր գործերին այնքան «մօտ» ծանօթութիւն ունիմ, որ համարձակ կասեմ, որ ամեն բան աչքովս տեսել և մատներովս չօշափել եմ։

Ցոլակ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ.

Լօրդ Գրէնվիլը տուեց դէնէրալ Գորդօնին հետևեալ հրահանգը։ «Պարոն, Թագաւոր կառավարութիւնը կամենում է, որ դուք անյապաղ գնաք Եգիպտոս և հաշիւ ներկայացնէք իրերի վիճակի մասին Սուդանում, նոյնպէս և այն միջոցների մասին, որոնք դուք օգտակար կը կը համարէք դեռ ևս Քարտումում գտանվող եգիպտական պահապան զօրքի և եւրօպացի և բնակչաց վիճակը ապահովելու համար։ Յանկալի է, որ դուք հնարաւորէք ամեն լաւ միջոցները Սուդանի ներքին գաւառները մաքրելու վերաբերութեամբ, որ դուք հոգս քաշէք լաւ վարչութիւն կազմելու ծովային նաւահանգիստներում և ներկայացնէք հաշիւ այս մասին։ Սոցա հետ միասին, առանձին ուշադրութիւն դարձրէք այն միջոցների վերայ, որոնք կարող լինէին խոչընդոտ լինել գերեվաճառութեան գործառնելուն, որովհետև ներկայ ազատասիրութիւնն և եգիպտական զօրաց հեռանալը ներքին Սուդանից երկիւղ է ազդում դորա վերաբերութեամբ։ Դուք կ'ստանաք հրահանգներ գործակալներից և նորին մեծութեան հիւպատոսից Կահիրէում, որոց միջնորդութեամբ էլ դուք կ'ուղարկէք տեղեկութիւնք թագաւոր կառավարութեան։ Դուք իրաւունք ունէք և մի և նոյն ժամանակ ձեզ յանձնարարվում է կատարելու բոլոր այն պարտականութիւնքն, որ ձեզ վերայ կը դնէ Եգիպտոսի կառավարութիւնը, որոյ մասին ձեզ կը զեկուցանէ պ. Ե. Բարինգ։ Ձեզ ուղեկից կը լինի գնդապետ Ստիւարդը, որ ձեզ կ'օգնէ կատարելու ձեզ եղած յանձնարարութիւնքը։ Եգիպտոս հասանելից յետ իսկոյն յարաբերութիւն կը սկսէք պ. Բէրինգի հետ, որից և կ'ստանաք հրահանգ, թէ արդեօք դուք իրանդ պիտի էք գնաք Սուակիմ կամ Նէղոսով Քարտում, թէ խրկէք այնտեղ գնդապետ Ստիւարտին։ Գրէնվիլ»։

— «Norddeutsche Allg. Zeit.» լրագիրը չատ դժգոհ է, որ գերմանական մամուլը վայելում է չափազանց մեծ ազատութիւն»։ Այս լրագրի կարծիքով պէտք է սահմանափակել անպատճառ մամուլի ազատութիւնը։ Բայց վատ չէր լինիլ, եթէ իշխան Բիսմարկի բերան եղող լրագրին, անտղել գատաստանական հալածանաց ցուցակը, որոնց ենթարկվեցան Պօզնանի նահանգի խմբագիրները։ Գուցէ այն ժամանակ իւր հայեցուածքը փոխէր։ Այս հաշուից երևում է, որ անցեալ 1883 թուականին Պօզնանի լեհ լրագիրների խմբագիրները ընդհանրապէս ենթարկվեցան 68½ ամիս բանտարկութեան, որն աւելի, որը պակաս։ Պօզնանի քաղաքական լրագիրներից միայն երկու լրագիրների խմբագիրը ազատ մնացին։ Բոլոր մնացածները գատապարտված են երկարատև կամ կարճատև բանտարկութեան։ Այս առթիւ Բէրլինի մի լրագիր ասում է, որ գերմանական մամուլն էլ պէտք է կազմէր այսպիսի վիճակագրական ցուցակ բոլոր Գերմանիաի համար, այն ժամանակ ժողովրդին յայտնի կը լինէր, թէ որպիսի դժուարութեանց հետ ստիպված են պատերազմելու այն մարդիկ (խմբագիրք), որոնք իրանց նպատակ են դրել հասարակութեանց իրաւանց և չահերի պաշտպանութիւնը նոցա դէմ, որոնք ցանկանում են սահմանափակել այս իրաւունքները։

Պօզնա վարդապետն, որ դեռ անցեալ մայիսին բանտարկվել էր, «Հայաստանի արտասուք» տեսորը հրատարակելու համար, չը դադարում պատճառով արտորվել է Տաճկաստանի սահմաններից դուրս, գրկվելով բոլոր քաղաքական իրաւունքներից։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

«Бакинск. Изв.» լրագիրը հաղորդում է, որ Բագուի տեղական բժիշկները մտադիր են բանալու հիւանդանոց երեք հիւանդների համար։ Զբաղմունքը ձրի կը լսժկվին։ Հիւանդանոցի հիմնադիրները բարեգործական ընկերութեանց և պօլիցիային կը տան տոմսակներ ձրի բժշկութեան համար և այս հաստատութիւնքը կը տան այդ տոմսերը նրանց, որոնք չքաւոր կը ճանաչվին։

***

«Каспій» լրագիրը հաղորդում է, որ Ղարաբաղի Ալպաուտ գիւղի կալուածատէր Ադիլհօզալովի ձիանների ջոկը փախցրել են։ Աւազակները չորս են եղած։ Յափշտակութիւնն այնպիսի ճարպիկութեամբ կատարվել է, որ կարծում են թէ դա տեղի է ունեցել երեսի Ա-լի-խազըլ-Օղլիի մասնակցութեամբ, որ, ինչպէս ասում են, բնակութիւն հաստատել է Պարսից սահմանի վերայ, ամուսնացել և ապրում է ազատօրէն և երեսմնապէս, իւր ազգական Շախսեվանների հետ այցելութիւն է անում իւր հին հայրենի տեղերին։

***

Ամսոյս 8-ին, չորեքշաբթի, տեղի ունեցաւ գէներալ-լեյտենանտ-Նդիդարովի յուղարկաւորութեան հանդէսը, թէ մահմեդականաց և թէ զանազան պաշտօնատարների ահագին բազմութիւնը վկայում է, թէ մեծ յարգանք էր վայելում հանգուցեալը, որովհետև թուրքի մէյդան նից մինչև հանդուցելոյ տունը բոլոր տարածութիւնը այնպէս լիքն էր բազմութեամբ, որ ասեղ գցելու տեղ չըկար։ Հանգուցելոյ մարմինը մետաղեայ դագաղի մէջ գրած, կրօնական ծէսը կատարելից յետ մղկեթում. տարան երկաթուղի կայարանն և գնելով առանձին կառքի վերայ ուղարկեցին Ելիսավէտոպոլ, ուր պիտի կատարվի թաղման կարգը։

***

Վրաց «Դրօյեբա» լրագիրը հաղորդում է, որ Թիֆլիս-Թիֆլիզեան խճուղին, որ մեծ յարմարութիւն էր թէ ճանապարհորդների և թէ չրջակայ գիւղերի համար, այժմ բոլորովին փչացել էն անպէտքէ. իսկ նրա կամրջների մասին խօսք էլ չէ կարող լինել, որովհետև մեծ մասը քանդվել են և նորոգելը կայ։

Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ.
Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՁԵԱՆՑ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Ներսիսեան Հայոց Ազգային-Հոգեւոր դպրանոցի հոգաբարձութիւնը որոշել է կատարել սոյն փետրուարի 14-ին ՀՈԳԵՀԱՆԴԻՍՏ ի տէր Հանդուցեալ երջանկայիշատակ հիմնադրի դպրանոցին վիհամբառ ՆԵՐՍԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ վանից աւազ եկեղեցում զինի սուրբ պատարագիչ, որ սկսվելու է առաւօտուայ ժամը 11-ին։

„ՔԷՂԿՈՒԼ“

Թուրքերէն լրագիրը հրատարակվում է Թիֆլիսում շաբաթը մի անգամ։ Տարեկան գինն է 4 ռ., կիսամեայն 2 ռ. 50 կոպ., Թիֆլիսում ստորագրվել կարելի է պ. Շահվերդովի գործակալութիւնում։ Օտարաքաղաքացիք իրանց պահանջը պիտի ուղղեն պ. Ի. Ռ. Ռեյոլդինի, Միխայլովսկի փողոց, տուն № 81։ Խմբագրատունը գտանվում է Միխայլովսկի փողոցում Ֆերտի տանը № 16, մ. կենգենլենսկու բնակարանում։

«ՎԱՐԴԱՐԱՆԻ» խմբագրութիւնը պատիւ ունի ծանուցանել Հայ-Հայ հասարակութեանը, որ ներկայ փետրվար ամսից կը շարունակուի «Վ ր ժ ա ր ա ն» ամսաթերթի հրատարակութիւնը և լոյս կը տեսնի նորա № 3, նոյն ուղղութեամբ և ոգիով և նոյն աշխատակիցների օգնութեամբ. ուստի հրաւիրում է դանկացողներին բաժանորդ գրուելու դիմել Թիֆլիս խմբագրութեան քարտուղար պ. Գ. Շահրուդալեանին հետևեալ հասցէով.— Въ Тифлисъ. Въ Редакцію журнала „ВАРЖАРАНЪ“ Абас-Абатская площадь, домъ № 8 Секретарю редакціи Григорію Шахъ-Будагянцу. կամ депо лампъ Цатурова

Տարեկան բաժանորդագինն է ՀԻՆԳ ռուբլի կանխիկ։

Յանձնարութիւն.— «ՎԱՐԴԱՐԱՆԻ» հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր և յունվար ամիսների լոյս տեսած համարների փոխարէն խմբագրութիւնը խոստանում է տալ իւր բաժանորդներին կամ մի ընթերցասութեան նոր գիրք, կամ նոյն ամիսների չափին համապատասխան մի համար յունիս ամսին։

Խմբագիրը — Հրատարակիչ. Ն. ԽՈՍՐՈՎԵԱՆ.

ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԱՏԱՄՆԱԲՈՑԻ ԴՕԿՏՕՐ ՎԱԼԴԷ

ԴՕԼՕՎԻՆՍԿԻ ՊՐՕՖՊԵԿՏԻ ՎԵՐԱՑ ՏԻԿԻՆ ՇԻՈՑԵՎԻ ՏԱՆԸ.

Մուտքը վէհափի ֆօտօգրաֆիայիմն է

Ընդունում է տիարներին արհեստական ատամներ դնելու համար, աւելորդական ձևով, ինչպէս ամբողջ ծնօտ, նոյնպէս մէկ-մէկ ատամներ, որոնք չէ կարելի զանազանել բնականից և որոնցմով կարելի է ազատօրէն ծամել կերակուր։

Բժշկում եմ ատամնացաւեր իմ հնարած միջոցներով և լցնում եմ փչացած ատամները մինչև ցայժմ գործադրութեան մէջ եղող ամեն տեսակ նոր պղօմբով, ունիմ ատամնային էլիքսիր, որ ամրացնում է ընտերի, ատամները և սրբչացնում է բերանի վատ հոտը, ատամնափոշի, որ ատամները սպիտակացնում է և մաքրում է։ Այս միջոցները թոյլատրած են և հաւանութիւն գտած բժշկական դեպարտամենտից։ Հիւանդներ ընդունում եմ առաւօտեան 10 ժամից մինչև 6-ը կէսօրից յետ։ Զորեքշաբթի և չաբաթ օրերը առաւօտեան 9 ժամից մինչև 11-ը ընդունում եմ չքաւորներին ձրի։

ՄՕՍԿՈՒԱՅՈՒՄ
Շուտով կը հրատարակուի
ՐԱՖՖԻ
ՋԱԼԱԼԷԴԻՆ
Վ. Հ Պ Ը։

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԷ և ՇՈՒՏՈՎ
ԼՈՑՍ ԿԸ ՏԵՍՆԻ
Գեորգ ԱՀ Բուլուանի
ՀԱՑՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ.
Երրորդ տպագրութեամբ.

«ԱՂԲԻՒՐ»

Լոյս տեսաւ № 2 (փետրուար) և ուղարկուեց բոլոր բաժանորդներին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

№ 2.

Տաճանուկովը. Գ. Շահվերդեան— Ընկուզենի. Ա. Մեհրաբեան.— Սառնամանիք, (Բանաստեղծութիւն). Ղ. Ազայանց.— Գիշերապահ Մկօի երազը. Կ. Մելիք-Շահնազար.— Գնդուկ, (բանաստեղծութիւն) Վաչագան.— Պարոյր Հայկազն, (Շարունակութիւն) Բաֆֆի.— կաչաղակների կռիւը աղուէսների հետ, Պրօֆ. Բօգդանով.— Թարգմ. Ց. Սահիմեանի։

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵԻ ԱՐՈՒԵՍՏ.

Էլէքտրականութիւն Լ. Ն. Ա.— Կնդանիներ, բոյսեր և հանքեր, (բնագիտական զբոյց ըստ Պ. Բէրի) II Գ. Մ.։

ԱՅԼ ԵԻ ԱՅԼ.

Անբախտ խալիֆայ. Մելիք։

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Հանելուկներ. (4 հատ).— Րեբուսներ (6 հատ)։— 2) Բայտարարութիւններ։ № 1-ի հանելուկի բացատրութիւնը։

Բաժանորդագրութիւնը շարունակվում է։

Մի ԵՐԻՏԱՍԱՐԴ Պետրովսկի Ակադեմիայում ուսումն աւարտած որոնում է մանաւանդ Դ Ա Ս Ե Ր, կամ մի այլ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ։— Հասցէն՝ Редакція «Агбюръ». Іосифу Терьтосесянцъ.

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ
Շ ի ր վ ա ն զ ա դ է
«ԳՈՐԾԱԿԱՏԱՐԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ»
և
«ՀՈԳԵՀ ՆԱԻԹԱԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ»
Ա Ր Ժ Է Ք 50 կ.

Կարելի է ստանալ կենդրոնական գրավաճառանոցում և հրատարակչի մօտ կաթոլիկեսկայա փողոց «Աստուածածարեան և ընկ.» առևտրական տան պահեստի կանոօրայում։

Աբէլ Ապրէսեանց.

ДОЗВОЛЕННО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ, 11-го Февраля 1884 г. Типограф. М. Рот. и К-о. На Гол. проспектѣ Домъ № 41.

Տպարան Մ. Ռօտինեանց և ընկ.